# ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Օգոստոսի 23-ին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը մարզպետարանում կատարել էքաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 18 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել է 9, աշխատանքի տեղավորման՝ 6, անօրինական սեփականաշնորհված տարածքի, տնակի սեփականաշնորհման եւ «Գրքի փառատոն» միջոցառման կազմակերպման հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից յոթին տրվել է դրական լուծում, մեկ դիմում մերժվել է,մեկ դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման, եւուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են մյուս հարցերի վերաբերյալ դիմումները: